

ԱՏՐՊՍՏԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻԾ

Մեր անդեալ յօղուածից *) արդէն զիտէ ընթերցողը, որ Պարսկաստանում չը կան կանոնադրեր: Գիտէ եւ այն, որ զրեթէ բոլոր կարգերի օրէնքները կամայականութիւնների եւ քմահաճոյքի մի անվերջ եւ երկար շարք է: Հէնց այդ անխնայական գրութեան արդիւնքն է, որ օրէց օր Պարսկաստանում, մանաւանդ Ասորկաստանում, կողոպուտները եւ հարստահարութիւնները լայն ծաւալ են ստանում, աւելի եւ աւելի ժողովրդի անտեսական վիճակը վատթարացնում: Կեանքի եւ դոյքի սպահովութիւն համարեա չը կայ: Քուրդքէդ-խանը յարձակում է իր աւազակային խմբով այս կամ այն գիւղի վրայ, խոփում, տանում է նախիրը, աւերում գիւղը եւ առանց պատժի մնում, շատ անգամ նոյն իսկ ընդդիմադիր ոյժ չը դնելով: Հաքիմը (գատաւորը), գաւառապետը, սարկարաստը միւս կողմից են կեղեքում ապեա ժողովրդին...

Աւելի սարսափելի են տարսկա-թրքական սահմաններում բուն դրած մի քանի քիւրդ ցեղեր, ինչպէս Շիկակ, Քարդարի, Մամազի եայլն, որոնց միակ զբաղմունքն է թալան-թրաւը: Սալմաստը աւելի մօտիկ լինելով սահմանին, անմիջապէս ենթակայ է դրանց յարձակումներին, որոնք կատարուել են եւ կատարուում են յաճախ ցերեկ ժամանակ, հէնց կառավարութեան պաշտօնականների աչքի առաջ: Ամբողջ ամառուայ ընթացքում սւ աշնան սկզբներին (այդ ժամանակներում են աւելի ունենում յարձակումները) Սալմաստի ամբողջ ազգաբնակչութիւնը եւ թուրք, եւ հայ, եւ այլն, ահ ու սարսափի մէջ են լինում: ամեն բոպէ, ամեն ժամ սպասողական ծանր դրու-

*) «Պատմիկը Պարսկաստանում», «Մուրճ» № 12, 1901.

Թիւն է. ահա քրդերի հրոսական և խառնիճաղանճ խմբերը ցած կը գան սահմանակից լեռներէց, կը յարձակուեն այս կամ այն գիւղի վրայ, կը սկսուեն սպանութիւններ և աւարառութիւններ: Սարսափը ընդհանուր է. վախենում են թէ ժողովուրդը և թէ պաշտօնեաները, վարչութիւնը:

Քիւրդ ցեղապետներէց ամենայայտնին է Զաֆար-աղան, որ լինում է Սալմաստի հարաւարեմտեան կողմում գտնուած Ճարա կողուող աւանում: Իսկ սրանից ոչ միայն Սալմաստի հայ և պարսիկ բնակիչներն են սարսափում, այլ և հաքիմները: Յարձակումները օրէցօր աւելի են սաստկանում և յանդուգն բնաւորութիւն ստանում: Այդ մասին դիմումն է լինում Ատըր-պատականի ընդհանուր նահանգապետին. աւազակներին զսպելու համար Թաւրիզից ուղարկում է նոր դատաւոր: Բայց նոր դատաւորը հէնց առաջին օրերում բարեկամանում է Զաֆար-աղայի հետ, տեսնելով նրա ոյժը: Նրանք փոխադարձաբար իրար այցելութիւններ են տալիս...

Որ Զաֆար-աղայից և ընդհանրապէս թիւրք աւազակներից վախենում են պարսիկ պաշտօնեաները, այդ պարզ է: Դրա մէջ համոզուելու համար առաջ բերենք հաղարաւոր փաստերից մէկը, որ տեղի է ունեցել դեռ անցեալ տարի:

Նոյն Զաֆար-աղայի ընկերներից մի քանիսը բանտարկուած են լինում Դիլիմանում (Սալմաստի կենտր. քաղաքը): Զաֆար-աղան իր խմբով գալիս պաշարում է քաղաքը, այն էլ ցերեկով, և յետ պահանջում բանտարկեալներին. կառավարուելում է աղայի պահանջը: Սալմաստի թրքաբնակ գիւղերի դրութիւնը պակաս յուսահատական չէ հայաբնակ գիւղերից:

Սակայն թիւրք-պարսկական սահմանադիմից հեռու էլ պակաս չեն աւազակային ասպատակութիւնները: Այդպէս, օրինակ, Արդաբեյն էլ իր շրջակայ գիւղերով այս տարի կռիւների ասպարէզ էր: Բայց այստեղ դերերը փոխուել են. այստեղ աւազակը քիւրդը չէ, այլ թուրք բէգերն ու խաները, որոնց թիւը այնքան մեծ է Պարսկաստանում: Սրանք անդադար, և՛ ցերեկով, և՛ գիշերով, յարձակում են գիւղերի վրայ, լինի թրքաբնակ կամ հայաբնակ, զարկում, տանում են, կտրում են կարաւանների առաջ, կողոպտում և սպանում: Սրանց աներեսութիւնը անցեալ տարի այն աստիճանի էր հասնել, որ կառավարութիւնը ստիպուած էր զինուորական ոյժի ղեմել: Զօրքի և այդ աւազակային խմբերի մէջ 1901 թ. օգոստոսի 13-ին կատարեալ ճակատամարտ է տեղի ունենում և աւազակները ստիպուած են լինում անձատուր լինել: Խմբի

պարագլուխները 9 հոգի են և բոլորն էլ բէգեր ու խաներ, իսկ ամենագլխաւորն է Մամադ Կուլի-բէգը, որը ունի և սեփական գիւղ: Այս ինն գլխաւորներին շղթայած տանում են Թեհրան գատկուս Կարծոււմ է, որ նրանք մեծ-մեծ գումարներ կաշառք տալով կ'ազատուեն...

Մի ուրիշ կարևոր խնդիր, որ մասամբ վերև առաջ բերուած պարագաններին—կեղեքումներին և հարստահարութիւններին անմիջական արդիւնքը պէտք է համարել, դա ատրպատական-ցիւների պանդխտութեան խնդիրն է: Ընդարձակ հայաբնակ գաւառները, ինչպէս Ղարադաղ, Խոյ, մանաւանդ Սալմաստը, հետքդհեւէ գատարկութեամբ են: Պանդխտութիւնը, որ սկսուել է դեռ 1828 ռուս-պարսկական պատերազմից յետոյ, մինչև այժմ էլ շարունակուում է: Պանդխտութեամբ է ոչ միայն հայը, այլ և թուրքը, ասորին և այլն, որոնք առաջինից պակաս չեն ճնշւում և հարստահարւում:

Հեռանում, պանդխտութեամբ են աշխատաւոր և երիտասարդ այժերը, իսկ մնում են միայն ծերունիները, կանայք և մանուկները: Ընդարձակ բարերեր գաշտավայրերը մնում են խոպան, աւանց վար ու ցանքսի: Անասնապահութիւնը՝ որ շատ նպաստաւոր յարմարութիւններ ունի—ընդարձակ արօտատեղիներ և հովիտներ, չի զարգանում աւազակային խմբերի ասպատակութիւնների շնորհիւ:

Սալմաստի պանդուխտներին կարելի է տեսնել ոչ միայն Թիֆլիս, Բաթում, Բագու, Փոթի, այլ և աւելի հեռու տեղերում, ինչպէս Ռոստով, Կերչ, Նովոօբոլյով, Սալտա, Թէոդոսիա, Սևաստոպոլ, 1896 թուին կազմած վիճակագրութեան համեմատ, Սալմաստը ունեցել է 1488 պանդուխտ:

Պանդխտութեան կողմից Ղարադաղն էլ յետ չէ մնացել Սալմաստից: Ղարադաղցիների պանդխտավայրն է գլխաւորապէս Շուշին և նրա մօտիկ գաւառները:

Պանդխտութեան խնդրում, բացի երկրի ընդհանուր անապահովութիւններից, սրոշ չափով դեր են խաղում և այն, որ քանի դնում է ժողովրդի պահանջները բարդանում են, բայց նա տեղում այդ պահանջներին չի կարողանում բաւարարութիւն տալ, ուստի պանդխտութեամբ է՝ աւելի մեծ վատտակ ձեռք բերելու համար: Այս հանդամանքը աւելի նկատուած է Թաւրիզի վերաբերմամբ, ուր համարեա չը կան ճնշումներ և հարստահարումներ:

Պարսկահայերի մէջ ապրուստ ձեռք բերելու միջոցներից մէկն էլ օլլի և գինի վաճառելն է: Արբեկողութիւնը, պէտք է ասել բաւական տարածուած է Պարսկաստանում: Մեր խօսքը մասնաւորելով Թաւրիզի վրայ, պէտք է նկատել որ խմիչք գոր-

ծածկը շատ տարածուած սովորութիւն է. կանայք էլ մեծ չափով խմում են:

Թաւրիզում շատ ընտանիքներ իրանց համար գինի և օղի են պատրաստում: 1900 թուին կազմած վիճակագրութեան համաձայն կանանց, ընտանեկան յարկի տակ, խմողների թիւը 100-ին 45 էր, այն ինչ ազատ տեղերում, օր. հարսանիքներում, հրաւերներում և այլն, ուր ճնշւում են, 100-ին 10 հազիւ ընկնի:

Պարսկաստանի հակալիօհօլական ընկերութեան կենտրոնական վարչութիւնը, որ գտնւում է Թաւրիզում, իր գոյութեան դեռ առաջին շրջանում, յանձնեց իր անդամներից մէկին (պ. Ռ. Մովսիսեան), որ տեղացի է և լաւ ծանօթ Ատրպատականին, ոգելից խմիչքների վերաբերմամբ մանրամասն՝ ստատիստիկա կազմել, թէ՛ սրճան գինի և օղի է գործ ածւում և այլն:

Նրա կազմած ստատիստիկայից հետեւեալը երևաց.

Թաւրիզի հայաբնակ երկու թաղերը, որոնք ունեն մօտ 615 տուն, տարեկան 515 խալուար գինի են դնում, որից խմելու համար գործ են ածում 56,800 շիշ (խալուարը հաշուելով 240 շիշ), դուրս եկած հնացնելու և պահելու բաժինը՝ Այդ երկու թաղերում գինեվաճառութեամբ պարսպում են 18 մարդ, որոնք տարէնը ծախում են 120 խալուար, իսկ մասնաւոր մարդիկ ծախում են (տների մէջ) 50 խալուար, իսկ օղի պատրաստում են 511 խալուար և իւրաքանչիւր խալուարին ստանում են 500 շիշ: Սրանից 80,000 շիշը ծախւում է հայերին, իսկ մնացածը՝ թուրքերին: Թուրքերի վրայ տարեկան ծախւում է թէ՛ գինի և թէ՛ օղի 286,300 շիշ: Թուրքերը առաջ, ինչպէս պատմում են, սեփական արբեցնող ըմպելիներ չէին պատրաստում, միայն 20 տարի է, որ սկսել են թէ՛ գինի և թէ՛ օղի պատրաստել:

Ատրպատականի միւս գաւառներին դալով՝ հաշուած է, որ իւրաքանչիւր մարդ մօտ 10—50 դրան է ծախսում տարեկան ոգելից խմիչքների համար *): Այսպէս.

	Ցուն, (տունը=5 անգամ),	Բնակիչ,	Ծախսում են.
Սալամաստան ունի	1,500	7,500	375,000 դր.
Ուրմին	430	2,150	32,250 »

*) Սալամաստան և Մարաղայում իւրաքանչիւր մարդ ալիօհօլի համար ծախսում է 50-ական դրան, Ուրմի՝ 15 դրան, Խոյում՝ 20 դրան, Սուրդուզ, Սուլ-Բուլաղում, Արդարիլում 10-ական դրան. Ղարադաղում անկի քիչ:

Խոյ	350	1,750	35,000 »
Սուղղուղ, Սօուղ-Բուլաղ,			
Արղարիլ	250	1,250	12,500 »
Մարաղա	200	1,000	50,000 »

Ամբողջ Ատրոպատականում հայ ընտանիքների թիւը հասնում է մօտ 22000-ի կամ 4400 տանու Սրանք ամբողջ տարուայ ընթացքում ծախսում են ալիօճօյի համար մօտ 744,400 ղանու։ Ատրոպատականում արեւեղութեան կողմից առաջին տեղը բռնում են Սալմաստը և Ուրմին, երկրորդ տեղը՝ Մարաղան և Խոյը, երրորդ տեղը՝ Արղարիլը, չորրորդը՝ Թաւրիզ, հինգերորդը՝ Սուղղուղ, Սօուղ-Բուլաղ, վեցերորդը՝ Ղարաղաղ։

Սատախատիկա կազմողը, ինչպէս վկայում է, այս բոլոր տեղեկութիւնները հաւաքել է ամենապատահելի մարդկանցից, այնպէս որ այդ թուանշանները դուրի չեն նշանակութիւնից։

Օղին և գինի վաճառողները հայեր են, իսկ յաճախորդները մեծ մասամբ թուրքեր, որոնք սիրում են ծածուկ մնալու համար խուլ փողոցներում եղած տները։ Այդ տներում թուրքերի երթևեկութիւնը տեղում է մինչև ուշ գիշեր։ Գալիս կոնծում են, աղմուկ-աղաղակ բարձրացնում, ամեն տեսակ կեղտոտ հայհոյանքներ ապրիտ իրար, և ամենամեծ ցաւն այն է, որ շատ անգամ այդ բոլորին ականատես են լինում փոքրիկ երեխաները։ Խմիչքը մատակարարում է տան մայրը, այդ էլ մի միջոց է շատ յաճախորդներ գրաւելու համար։

Ալիօճօյի չարիքների դէմ մարտնչելու համար Պարսկաստանի Հակալիօճօյական Ընկերութիւնը, որ հիմնուել 1899 թ. մայիսին, կուռւմ է մի շարք օգտաւէտ դասախօսութիւններ կազմակերպելով, որոնց միջոցով պարզւում է ժողովրդի համար այդ անտի հասցրած ահապին վնասները։

Դասախօսութիւնների մասին աւելի լրիւ գաղափար տալու համար, աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ նիւթերի ցանկը.

1. Ալիօճօյականութեան վտանգը. 2. Անասունների արեւեղութիւնը. 3. Ալիօճօյի երեխայի վրայ ունեցած ազդեցութիւնը. 4. Հակալիօճօյական շարժում Թուսաստանում. 5. Հակալիօճօյական շարժում ամբողջ աշխարհում. 6. Թոքախտ և ալիօճօյականութիւն. 7. Ալիօճօյականութեան մասին ստատիստիկա. 8. Պարիզի հակալիօճօյական կօնգրէսից քաղուածքներ. 9. Ալիօճօյի վնասները Ֆիզիկականի և բարոյականի վրայ նայլն և այլն։

Ընկերութիւնը, բացի հրապարակական դասախօսութիւն-

ներից, բրօշերները միջոցով էլ պրօպագանդա է անում ակօհօյի դէմ, պարզելով նրա հասցրած վնասները և չարիքները: Մինչև այժմ Պարսկաստանի Հակալիօհօլական Ընկերութիւնը հրատարակել է միայն երկու բրօշեր. առաջինը ղօկ. Կ. Փաշայեանի կազմած՝ «Մարդկութեան ամենամեծ թշնամին» և երկրորդը բժիշկ Վահան Արծրունու՝ «Մի խմիր» Ընկերութիւնը մտադիր է յաճախ բրօշերներ հրատարակել, բայց նրա նիւթական միջոցները չեն ներուժ: Բրօշերները բոլորովին ձրի է բաժանուում անդամ-անդամօհիներին, նաև կողմնակի հետաքրքրուող մարդկանց, և այդ բոլոր ծախքերը ծածկելու համար Ընկերութեան վարչութիւնը չունի պարբերական և հաստատուն աղբիւրներ: Նա այդ լրացնում է զանազան զրական-երաժշտական երեկոյթներ կազմակերպելով և մանր-մունք նուէրներով:

Եթէ մէկը համոզուում է և ըսնկանում է անդամակցել Ընկերութեանը, նրան տրւում է մի խոստմնագիր, որով նա պարտաւորւում է ոչ միայն ոգելից խմիչքներ չը գործածել և ուրիշներին չառաջարկել, այլ և խօսել զանազան շրջաններում զրանց վնասների մասին, աշխատել ուրիշներին համոզել և յորդորել, որպէս զի անդամակցեն Ընկերութեան:

Պարսկաստանի Հակալիօհօլական Ընկերութիւնը շատ ուշադրութիւն է դարձնում նոր, մատաղ սերնդի վրայ, որը դեռ գերի չէ դառել այդ ախտին:

Ընկերութիւնը հետզհետէ, աւելի ու աւելի ընդարձակւում է. և պարսկահայերի բոնած համակրելի դիրքը դէպի այս հանրօգուտ ձեռարկութիւնը պարզ ցոյց է տալիս, որ հակալիօհօլական շարժումը դեռ էլի կ'ընդարձակուի և աւելի ու աւելի լայն ծաւալ կը ստանայ, փրկելով անթիւ ընտանիքներ և ամբողջ սերունդներ:

Այժմ հակալիօհօլական Ընկերութիւնը Ատրպատականի զանազան մասերում ունի մասնաճիւղեր, ինչպէս Սալմաստում, Խոյում, Մարագայում և Ուրմիում, և անդամ-անդամօհիներ իւր իւր հասնում մօտ 400-ի: Վերջին ժամանակներս հակալիօհօլական շարժում է սկսուել Նոր-Ջուղայի հայերի մէջ, որոնք դիմել էին Ընկերութեան նախագահ ղօկ. Կ. Փաշայանին և բրօշուրներ խնդրել:

Այս շարժումը արձագանք է գտել նաև Պարսկաստանից դուրս: Պարսկաստանի հակալիօհօլական Ընկերութիւնը ունի մասնաճիւղեր նաև Կովկասում, ինչպէս Կողքում, Բաքում, Իզդիրում և այլն:

Այս երևոյթը միանգամայն ուրախալի և օրինակելի է: Ընկերութիւնը գործում է զովելի եռանդով. և ակօհօլի պատճա-

ռաժ չարիքները աւելի պարզ և հասկանալի դարձնելու համար պէտք է մոզական լապտերով ցոյց տալ ժողովրդին պատկերներ, որոնք պիտի պարունակեն արկօհօլից առաջացած աւերումները:

Պարիզաբնակ իշխան Լուսինեանը, ինչպէս իմացայ, յանձն է առել ուղարկել այդպիսի նկարներ:

Պարսկաստանի Հակալիօհօլական Ընկերութիւնը յարաբերութիւն և կապ ունի եւրոպական նման ձեռնարկութիւնների հետ: Այս ընկերութիւնը մասնակցել է Վիէնայում 1901 թ. ապրիլին կայացած «Ժողովական կօնգրէսին»՝ ուղարկելով իր երկամսայ գործունէութեան համառօտ տեղեկագիրը և հաշիւը:

Պարսկաստանի կեանքի ընդանուր խաւար ֆօնի վրայ այդ ընկերութիւնը իր գործունէութեամբ մի փայլուն զիծ է կազմում:

ԵՐ. ՅՐԱՆԳԵԱՆՑ